ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐՆ ՈՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ (1976-2003թթ.)

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ինչպես և աշխարհի մի շարք այլ երկրներում, 1965թ. հայ համայնքը, նշելով Մեծ Եղեռնի 50-րդ տարելիցը, իր բողոքի ձայնը բարձրացրեց ընդդեմ այդ համամարդկային նշանակություն ունեցող իրադարձությունը մոռացության մատնելուն: Ամերիկահայությունը, փոքրիշատե սթափվելով ցեղասպանության ու գաղթի հասցրած հարվածներից և՛ սերնդե-սերունդ և՛ իբրև առանձին քաղաքացիներ, և՛ իբրև միասնական համայնք ավելի ու ավելի կայանալով Միացյալ Նահանգներում, խախտեց Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ առկա լռությունն ու ԱՄՆ-ի իշխանություններին կոչ արեց պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը և հիշատակի արժանացնել դրա զոհերին: Այս կոչը և դրան հետևող աստիճանաբար ծավալված հետևողական աշխատանքը տվեցին իրենց արդյունքները: Սկսվեց ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման ու դատապարտման գործընթացի երկրորդ փուլը (առաջին փուլը սկսվել էր դեռ ցեղասպանության ընթացքում, դրևորվել էր հիմնականում ցեղասպանությունը փաստող առաջին վավերագրերի ստեղծմամբ և ավարտվել էր տասնամյակներ տևած լռությամբ): Այն դրսևորվեց հիմնականում երեք հարթություններում՝ առանձին ամերիկյան նահանգների ներկայացուցչական մարմինների կողմից բանաձևերի ընդունմամբ և նահանգապետերի հայտարարություններով, ԱՄՆ-ի Կոնգրեսում բանաձևերի ներկայացմամբ և դրանց շուրջ ծավալվող բուռն քննարկումներով, ԱՄՆ-ի նախագահների ուղերձներով և հայտարարություններով:

Հարկ է նկատել, որ թեև առանձին նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը մեծ ավանդ է ներդնում ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում, այդուհանդերձ, այն իր կարևորությամբ զիջում է երկրի դաշնային իշխանությունների կողմից բանաձևերի ընդունմանն ու ուղերձների հրապարակմանը: Դաշնային իշխանությունների մակարդակում նշանակալի է հատկապես ամերիկյան օրենսդիր մարմնի՝ Կոնգրեսի դերակատա-

ռումը. ըստ էության, Կոնգրեսի կողմից համապատասխան բանաձևի ընդունումն ամենակարևոր քայլը կլիներ ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացում: Սակայն, ինչպես ցույց է տվել պատմությունը, ամերիկյան Կոնգրեսում Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևի ընդունումը մեծապես կախված է այդ պետության գործադիր իշխանության՝ նախագահի ու նրա վարչակազմի դիրքորոշումից, իբրև ուղենիշ ծառայող նախագահների ուղերձներից ու հայտարարություններից: Այս համատեքստում ԱՄՆ-ի նախագահների ուղերձներն ու հայտարարությունները ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում հատկապես մեծ կշիռ են ձեռք բերում:

Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջին նախագահը, որը 1965թ. ի վեր խոսել է Հայոց ցեղասպանության մասին, Ջիմի Քարտերն էր: Դեռ իբրև նախագահի թեկնածու՝ նա 1976թ. հոկտեմբերի 22-ին հայտարարեց. «...Հայ ժողովուրդն անկոտրում կերպով շարունակում է անսանձ ոգի և ազատության գործին նվիրվածություն ցուցաբերել, որոնք դրսևորվել են 1915-1917թթ. արյունահեղ սպանդից հետո հանրապետության ստեղծման ժամանակ: Հաշվարկների համաձայն՝ 1,5 միլիոն մարդ է սպանվել «20-րդ դարի առաջին ցեղասպանության» տարիներին: ...Ես վճռականորեն պաշտպանում եմ Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի վերաբերյալ կոնվենցիայի վավերացումը: Ժամանակն է, որ աշխարհը ճանաչի, որ ցանկացած երկրի կողմից ցեղասպանությունն իբրև ազգային քաղաքականություն որդեգրելը մարդկության դեմ հանցագործություն է, որը պետք է դատապարտվի: ...Իբրև Դեմոկրատական կուսակցության առաջնորդ՝ Վուդրո Վիլսոնի կուսակցության, մարդ, որը կարեկցանքով վերաբերեց հայ ժողովրդին այն պահին, երբ նա ենթարկվեց ծայրահեղ անարդարության, ես կհասնեմ նրան, որ հայ ժողովրդի ձայնը լսվի...»:[1]

Երկու տարի անց՝ 1978թ. մայիսի 16-ին, արդեն իբրև ԱՄՆ-ի նախագահ, Քարտերը Սպիտակ տանն ամերիկահայ համայնքի պատվին կազմակերպված ընդունելության ժամանակ հայտարարեց. «...Ես կասկածում եմ, թե որևէ այլ ժողովուրդ ավելի շատ տառապանքներ կրած լինի: Ես գիտեմ, որ ձեր հայրենիքի հիմնադրմանը նախորդած տարիներին դուք շատ եք տառապել: Սակայն աշխարհը հիմնականում չգիտի, որ 1916թ. նախորդած տարիներին ողջ հայ ժողովրդին բնաջնջելու կանխամտածված փորձ է արվել՝ հավանաբար դա երբևէ որևէ ժողովրդի ապրած ամենամեծ ողբերգություններից մեկն է: Եվ ոչ մի Նյուրնբերգյան դատավարություն տեղի չի ունեցել: Չեն եղել բարձրաստիճան այրեր, ովքեր կճանաչեին, թե որքան եք տառապել դուք և ձեր ընտանիքները: Ես խորապես համոզված եմ, որ ես՝ իբրև նախագահ, պետք է վստահ լինեմ, որ դա երբեք չի մոռացվի՝ ոչ միայն ձեր պատմական ողբերգությունը, այլև ներկա գործերը և պայծառ ապագան»:[2]

Պետք է նշել, որ իր այս հայտարարություններով Ջիմի Քարտերը բավականին հակասական նախադեպ ստեղծեց: Մի կողմից, նա հիմք դրեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ ամերիկյան նախագահների կողմից ամերիկահայ համայնքին ուղղված ուղերձներին և հայտարարություններին՝ ընդ որում, անդրադառնալով նաև ցեղասպանության ճանաչման ու դատապարտման անհրաժեշտության խնդրին, և այս առումով նրա դերակատարումն առավել քան դրական էր:

Մյուս կողմից, սակայն, Քարտերն իր հայտարարություններն ամբողջովին չէր նվիրում միայն Հայոց ցեղասպանության խնդրին: Նա խոսում էր հայ ժողովրդի տարբեր արժանիքների, մաքառումների օրինակներով լի պատմություն ունենալու, առաջին քրիստոնյա ազգը լինելու, ամերիկահայ համայնքի կողմից ԱՄՆ-ի կյանքում ներդրվող կարևոր ավանդի, նույնիսկ՝ Դեմոկրատական կուսակցությանը ցույց տրվող աջակցության, Լիբանանի հայ համայնքին օգնություն ցույց տալու անհրաժեշտության և շատ այլ հանգամանքների մասին և, ըստ էության, միայն մակերեսորեն էր անդրադառնում ցեղասպանության խնդրին: Հարցադրումից խուսանավելու այս օրինակը, ցավոք, վարակիչ դարձավ հաջորդ նախագահների հայտարարությունների համար: Եվ ամենակարևորն ու, թերևս, ամենաբացասականն այն էր, որ Քարտերը, խոսելով Հայոց ցեղասպանության մասին, ներկայացնում էր ցեղասպանության հանցագործությունը բնորոշող հատկանիշները (օրինակ՝ ողջ ազգը բնաջնջելու մտադրությունը), սակայն խուսափում էր «ցեղասպանություն» բառն օգտագործելուց: Սա հատկանշական դարձավ Հայոց ցեղասպանության տարելիցի կապակցությամբ արվող հետագայի բոլոր ամերիկյան նախագահների ուղերձների համար:

Այս առումով միակ բացառությունը դարձավ նախագահ Ռոնալդ Ռեյգանը: Վերջինս 1981թ. հանդես եկավ իր թիվ 4838 հայտարարությամբ, որով ԱՄՆ-ում Հոլոքոստի հիշատակի օրեր էին սահմանվում: Հայտարարության մեջ Ռեյգանն ընդգծում էր. «...Ինչպես դրանից (Հոլոքոստից - *Ա. Մ.*) առաջ տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը և դրան հաջորդած կամբոջացիների ցեղասպանությունը, ինչպես և չափազանց շատ այլ ժողովուրդների նկատմամբ չափազանց շատ այլ նման հալածանքները, Հոլոքոստի դասերը երբեք չպետք է մոռացվեն»:[3]

Իհարկե, այս հայտարարությանը գնահատական տալիս պետք է հաշվի առնել, որ հայտարարությունը չի արվել անմիջապես Հայոց ցեղասպանության տարելիցի կամ նրա զոհերի հիշատակի ոգեկոչման կապակցությամբ, և հայտարարության մեջ Հայոց ցեղասպանության վերաբերյալ միայն հպանցիկ անդրադարձ էր արված: Դրանից, սակայն, հայտարարության արժեքը չի կարող նսեմացվել, քանի որ նրանում, այնուամենայնիվ, օգտագործված էր «Հայոց ցեղասպանություն» ձևակերպումը: Բացի այդ, հայտարարության մեջ հավասարության նշան է դրված մի կողմից հայերի ու կամբոջացիների ցեղասպանության և մյուս կողմից հրեական Հոլոքոստի միջև, որը ճանաչվել և դատապարտվել է ողջ աշխարհի կողմից: Այս առումով Ռեյգանի հայտարարությունն, իհարկե, մեծ ձեռքբերում էր: Այն աննախադեպ էր և, ցավոք, մնաց անկրկնելի:

Ուշագրավ է, որ նախքան ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում հաղթելն ու նախագահի պարտավորություններ ստանձնելը Ռոնալդ Ռեյգանը երկու ժամկետով (1966-1974թթ.) պաշտոնավարել էր իբրև Կալիֆորնիայի նահանգապետ, իսկ Կալիֆորնիան, ինչպես հայտնի է, ամերիկյան նահանգների շարքում առաջինն է հայկական ծագում ունեցող քաղաքացիների թվով և ամերիկահայ համայնքի ազդեցիկությամբ: Ուստի Ռեյգանը քաջածանոթ էր այդ համայնքի՝ ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչմանը հասնելու ձգտմանը, և արդեն իբրև նախագահ՝ նրա կողմից «Հայոց ցեղասպանության» ձևակերպումն օգտագործելը մասամբ նաև այդ հանգամանքով էր պայմանավորված:

Ինչևէ, Ռեյգանի հայտարարությունը մեկ քայլ առաջ էր, սակայն այն ամենևին էլ չի կարող համարվել վերջին քայլը ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու գործում: Ռեյգանի կողմից պաշտոնական հայտարարության մեջ «Հայոց ցեղասպանություն» բառակապակցությունն օգտագործելն ամենևին էլ չէր նշանակում այդ պետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և նույնիսկ չէր էլ նշանավորում այդ գործընթացում մի նոր փուլի սկիզբը: Դա է ապացուցում ԱՄՆ-ի հաջորդ նախագահների ուղերձներում ու հայտարարություններում դրսևորված հետընթացը:

Բացի այդ, պետք է հաշվի առնել նաև, որ այս հայտարարությունից հետո, տեղի տալով Թուրքիայի կառավարությունից եկող ազդակներին, Ռեյգանի վարչակազմը նահանջեց իր դիրքորոշումից և բավականին բացասական դերակատարում ունեցավ ամերիկյան պաշտոնական շրջանակներում Հայոց ցեղասպանության խնդրի արծարծման հետագա գործընթացում: Այսպես, 1982թ. օգոստոսին ԱՄՆ-ի Պետքարտուղարությունը լույս ընծայեց մի հոդված, որում ասված էր. «1915թ. Փոքր Ասիայում տեղի ունեցած իրադարձությունները կասկածահարույց են, և Պետքարտուղարությունը հավանություն չի տալիս այն պնդումներին, թե թուրքական կառավարությունը ցեղասպանություն է իրականացրել հայ ժողովրդի դեմ»:[4] Ռեյգանի վարչակազմի, հատկապես Պետքարտուղարության, Պաշտպանության նախարարության և Ազգային անվտանգության խորհրդի ակտիվ միջամտությամբ Կոնգրեսում շրջանառությունից հանվեցին կամ մերժվեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերը՝ 1984թ.՝ թիվ 247 (Ներկայացուցիչների պալատ) և թիվ 241 (Սենատ) բանաձևերը, 1985թ.՝ թիվ 192 (Ներկայացուցիչների պալատ) և թիվ 102 (Սենատ) բանաձևերը:[5]

Ինչպես և Ջիմի Քարտերը, ԱՄՆ-ի մեկ այլ նախագահ՝ Ջորջ Բուշ Ավագը՝ իբրև նախագահի թեկնածու, խոստացավ չենթարկվել քաղաքական ճնշումներին և ճանաչել Հայոց ցեղասպանությունը, սակայն արդեն ընտրվելուց հետո իր պաշտոնական ուղերձում խուսափեց «ցեղասպանություն» բառը կիրառելուց:

Այսպես, 1988թ. հոկտեմբերին նախընտրական քարոզարշավի ժամանակ Ջորջ Հ. Բուշը հայտարարեց. «...Միացյալ Նահանգները պետք է ճանաչի Օսմանյան կայսրության վերջին տարիներին հայ ժողովրդի ցեղասպանության փորձը՝ վերապրածների, գիտնականների և այդ ժամանակի մեր ներկայացուցիչների վկայությունների հիման վրա, եթե մենք ցանկանում ենք վստահ լինել, որ նման սարսափները երբեք չեն կրկնվի: Ամերիկացի ժողովուրդը, մեր կառավարությունը և, իհարկե, Բուշի վարչակազմը երբեք թույլ չեն տա, որ քաղաքական ճնշումները խոչընդոտեն մարդկության դեմ հանցագործությունները մեր կողմից դատապարտելուն: Ես կմիանամ Կոնգրեսին՝ հիշատակի արժանացնելու այդ ժամանակաշրջանի զոհերին»:[6]

Արդեն նախագահի պարտավորությունները ստանձնելուց հետո՝ 1990թ. ապրիլի 20-ին, իր ուղերձում Բուշ Ավագը հայտարարեց. «...Թեև նրանց (հայերի - *Ա. Մ.*) պատմությունը դրոշմված է մի շարք ողբերգություններով, այն ոչ պակաս չափով արտացոլում է նաև նրանց հավատը և նրանց ավանդույթի ուժն ու ճկունությունը: Այդ ողբերգությունների թվում են 1988թ. երկրաշարժը և ամենաակնհայտը՝ 1915-1923թթ. Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից իրականացված սարսափելի կո-

տորածները: Միացյալ Նահանգները մարդկության դեմ այս հանցագործությանն արձագանքել է միջազգային դիվանագիտական և մասնավոր օգնության կազմակերպման ջանքերով: ...Կոտորածների 75-րդ տարելիցին ես ցանկանում եմ միանալ հայերին և բոլոր նրանց, ովքեր 1990-ի ապրիլի 24-ը նշում են իբրև ավելի քան մեկ միլիոն հայ զոհերի հիշատակի օր: Ես կոչ եմ անում բոլոր ժողովուրդներին աշխատել կանխել մարդ արարածի նկատմամբ անմարդկային վերաբերմունքի ապագա դրսևորումները»:[7]

Այսպիսով, նախագահ Բուշը 1919-1923թթ. իրադարձություններն անվանում է ոչ թե ցեղասպանություն, այլ «կոտորածներ»: Այսուհանդերձ հարկ է նշել, որ Բուշ Ավագն այդ կոտորածները բնորոշում է իբրև «մարդկության դեմ հանցագործություն», որի դրսևորումներից մեկն էլ ցեղասպանությունն է: Ուղերձում նման երկիմաստության առկայությունը թույլ չի տալիս միանշանակորեն պնդել ոչ այն, որ նախագահ Բուշը ճանաչել է Հայոց ցեղասպանությունն իբրև ցեղասպանություն, և ոչ էլ այն, որ նա խուսափել է այն ճանաչելուց:[8] Միաժամանակ հարկ է նկատել, որ ինչպես Ռոնալդ Ռեյգանի դեպքում, Ջորջ Բուշ Ավագի պաշտոնավարության օրոք ևս ամերիկյան վարչակազմը նախագահի գլխավորությամբ լրջորեն խոչընդոտեց ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունմանը՝ տեղի տալով թուրքական և այս անգամ՝ նաև իսրաելական կառավարությունների ճնշումներին: Մասնավորապես՝ վարչակազմի միջամտությամբ 1990թ. փետրվարի վերջին, մարտի սկզբին տապալվեց Սենատի թիվ 212 համատեղ բանաձևի ընդունումը:

Ի տարբերություն իր նախորդների՝ ԱՄՆ-ի հաջորդ նախագահ Բիլ Քլինթոնը Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ բազմաթիվ անգամներ. նրա պաշտոնավարության օրոք՝ սկսած 1994թ., Հայոց ցեղասպանության տարելիցի կապակցությամբ արվող նախագահական ուղերձները դարձան ամենամյա: Սակայն բովանդակային առումով այս հանգամանքը որևէ լուրջ փոփոխություն չմտցրեց: Ավելին՝ արդարացի կլինի նկատել, որ նույնիսկ որոշակի հետընթաց արձանագրվեց հայկական կոտորածներն իբրև ցեղասպանություն բնորոշելու առումով:

Այնուամենայնիվ, կար մի նրբերանգ, որը նոր էր ամերիկյան նախագահների ուղերձներում. Բիլ Քլինթոնը հայերի տեղահանությունների և կոտորածների վերաբերյալ հիշատակումների հետ մեկտեղ սկսեց խոսել Հայաստանի ապագայի մասին: Եթե Ջիմի Քարտերի և Ջորջ Հ. Բուշի ուղերձները, թեկուզև մակերեսորեն, այնուամենայնիվ, նվիրված էին անցյալի իրադարձություններին և ցեղասպանության՝ որպես երևույթի, նկատմամբ ԱՄՆ-ի վերաբերմունքին, ապա Քլինթոնի ուղերձներն առավելապես նվիրված էին Հայաստանին ու նրա ապագայի վերաբերյալ ԱՄՆ-ի տեսլականին:

Եվ սա ամենևին էլ զարմանալի չէ: Քարտերի, Ռեյգանի և Բուշ Ավագի (1990թ. դրությամբ) պաշտոնավարության օրոք Հայաստանն առանձնակի հետաքրքրություն չէր ներկայացնում ԱՄՆ-ի համար. այն Խորհրդային Միության մի մասն էր, իսկ Խորհրդային Միության փլուզման հեռանկարն այնքան էլ կոնկրետ և իրատեսական չէր: Մինչդեռ արդեն Բիլ Քլինթոնի նախագահության շրջանում անկախ Հայաստանի հանրապետության գոյությունն արդեն կայացած փաստ էր, և Միացյալ նահանգներն՝ իբրև այդ տարածաշրջանում ռազմավարական շահեր ունեցող գեր-

տերություն, որոշակի քաղաքականություն էր իրականացնում Հայաստանի նկատմամբ: Եվ Հայոց ցեղասպանության տարելիցի կապակցությամբ արվող ԱՄՆ-ի նախագահի ուղերձներն այսուհետև ԱՄՆ-ի հայաստանյան քաղաքականության բաղկացուցիչ մասն էին:

Զարգացնելով նախորդների որդեգրած սկզբունքը՝ Քլինթոնն իր ուղերձներում է՛լ ավելի հպանցիկորեն էր անդրադառնում հայկական կոտորածներին և ավելի շատ խոսում էր ԱՄՆ-ի կյանքում ամերիկահայերի ներդրած ավանդի, անկախ պետականություն ու ազատական տնտեսություն կառուցելու, հարևանների և, մասնավորապես, Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու, Ղարաբաղյան խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու գործում Հայաստանի հանրապետությանը սատար կանգնելու ԱՄՆ-ի պատրաստակամության մասին:

Այսպես, 1994թ. ապրիլի 24-ի իր ուղերձում ցեղասպանության մասին Քլինթոնն ասել է ընդամենը հետևյալը. «Այս նշանակալի օրը ես միանում եմ ողջ աշխարհի հայերին՝ հիշելու 1915թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած կոտորածների զոհերին: Այս ողբերգության հետևանքները հիմնովին վերաբերում են նաև մեզ, և մենք միասին ենք սգում անմեղ կյանքերի կորուստը...»:[9]

1995թ. ապրիլի 23-ի իր ուղերձում Քլինթոնը մատնանշում էր. «Այս նշանակալի օրը ես միանում եմ Ամերիկայի, Հայաստանի և ողջ աշխարհի հայերին՝ նշելու Օսմանյան կայսրության վերջին տարիներին տեղի ունեցած կոտորածների զոհ դարձած հայերի 80-րդ տարելիցը... Հայերի կոտորածների 80-րդ տարելիցին ես կոչ եմ անում բոլոր մարդկանց աշխատել կանխել այսպիսի անմարդկայնության ապագա դրսևորումները...»:[10]

ԱՄՆ-ի նախագահի՝ 1996թ. ապրիլի 24-ի ուղերձում ընդգծված էր. «81 տարի առաջ այս օրը Կոստանդնուպոլիս քաղաքում ավելի քան 200 հայ քաղաքացիական, քաղաքական, մտավորական առաջնորդներ ձերբակալվեցին, տեղահանվեցին և, ի վերջո, սպանվեցին: Այդ օրը նշանավորեց դարի ամենամութ պահերից մեկի սկիզբը: Այս նշանակալի օրը ես միանում եմ ողջ աշխարհի հայերին՝ նշելու 1915-1923թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած 1,5 միլիոն հայերի անիմաստ տեղահանությունների և կոտորածների հիշատակը...»:[11]

1997թ. ապրիլի 22-ին Քլինթոնը նշում էր. «Յուրաքանչյուր տարի այս Հիշատակի օրը մենք միանում ենք ամերիկահայերին և ողջ աշխարհի հայ համայնքին՝ նշելու 20-րդ դարի պատմության ամենամութ գլուխներից մեկը՝ 1915-1923թթ. Օսմանյան կայսրությունում անթիվ հայերի կոտորածները: Մենք հիշում ենք այդ սարսափելի ժամանակի զոհերին՝ շուրջ 1,5 միլիոն անմեղ մարդկանց, ովքեր տեղահանության տառապանքներն են կրել և մահացել...»:[12]

1998թ. ապրիլի 24-ի նախագահական ուղերձում ասված էր. «Այս տարի, ինչպես և անցյալում, մենք միանում ենք ամերիկահայերին՝ նշելու այս դարի պատմության ամենատխուր գլուխներից մեկի՝ 1915-1923թթ. Օսմանյան կայսրության 1,5 միլիոն հայերի տեղահանությունների և կոտորածների հիշատակը: Անցյալի այս ցավալի իրադարձությունները նաև ապագայի համար հզոր դաս են ծառայում՝ տվորեցնելով, որ մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքը չպետք է հանդուրժվի, և որ չարիքը չի կարող հաղթել...»:[13]

Հավատարիմ մնալով իր ոճին՝ իր հաջորդ՝ 1999թ. ապրիլի 19-ի ուղերձում Քլինթոնն ասում էր. «Այս շաբաթ նշվում է դարի պատմության ամենատխուր գլուխներից մեկը՝ 1,5 միլիոն հայերի տեղահանությունն ու կոտորածը Օսմանյան կայսրության վերջին տարիներին: Մենք մեր երկրի բոլոր ամերիկահայերի և արտասահմանի հայկական համայնքների հետ սգում ենք այդքան անմեղ կյանքերի կորուստի կապակցությամբ... Մենք սովորում ենք անցյալի դասերից, սակայն մենք նաև ապագա ենք կառուցում...»:[14]

Քլինթոնի՝ 2000թ. ապրիլի 24-ի ուղերձում ասված էր. «Այսօր մենք հիշում ենք 20-րդ դարի մեծ ողբերգությունը՝ գրեթե 1,5 միլիոն հայերի տեղահանությունն ու ոչնչացումը Օսմանյան կայսրության վերջին տարիներին... Ես կոչ եմ անում բոլոր ամերիկացիներին էլ ավելի ամուր վճռականությամբ լցվել՝ կառուցելու մի աշխարհ, որտեղ նման իրադարձությունները այլևս չեն կարող կրկնվել: Դասը, որը մենք պետք է քաղենք պատմությունից, կայանում է նրանում, որ մենք պետք է բոլոր երկրների ժողովուրդների համար ավելի մարդկային ապագա կառուցենք... Մենք խրախուսում ենք այդ տարածաշրջանի քաղաքացիների միջև ցանկացած երկխոսության, որն արագացնում է հաշտեցումն ու փոխըմբռնումը...»:[15]

Ավելորդ չէ նկատել, որ իր նախորդների նման նախագահ Քլինթոնը ևս միջամտեց ամերիկյան Կոնգրեսում Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունման գործընթացին: Այսպես, 1996թ. մայիսի 15-ին՝ նույն օրը, երբ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում վերջին քսան տարիների ընթացքում առաջին անգամ տեղի էին ունենում լսումներ՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը, ԱՄՆ-ի Պետքարտուղարության խոսնակ Գլեն Դեյվիսը հրապարակավ հայտարարեց, որ ԱՄՆ-ի վարչակազմը հավանություն չի տալիս Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, քանի որ դա կարող է վնասել թուրք-ամերիկյան հարաբերություններին:[16] Բացի այդ, իր պաշտոնավարության վերջում՝ 2000թ., երբ խիստ մեծ էր Կոնգրեսում Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 398, ապա նաև թիվ 596 բանաձևերի ընդունման հավանականությունը, Քլինթոնը թույլատրեց պետքարտուղար Մադլեն Օլբրայթի, Անկարայում ամերիկյան դեսպան Ռոբերտ Փիրսոնի, թուրքական կառավարական պատվիրակության անդամների ակտիվ միջամտությունը և ելույթները կոնգրեսականների առջև: Ավելին, տեղի տալով թուրքական իշխանությունների աննախադեպ լուրջ ճնշումներին՝ Քլինթոնն անձամբ նամակ գրեց Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթին՝ հայտնելով. «Ձեզ եմ դիմում Արևելյան Անատոլիայում 1915-1923թթ. Օսմանյան իշխանության օրոք տեղ գտած դժբախտ դեպքերին վերաբերող թիվ 596 օրինագծի շուրջ իմ մտահոգությունը հայտնելու նպատակով: ...Օրինագծի քննարկումն այս անհանգիստ ժամանակաշրջանում բացասաբար կանդրադառնա բոլոր այս շահերի վրա և կձախողի Հայաստանի ու Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավմանն ուղղված (նաև օրինագծի կողմնակիցների) ջանքերը: Ես լիովին հասկանում եմ, թե որքան սուր են ընկալում Թուրքիան և Հայաստանն այս խնդիրը: Վերջին հաշվով, այս ցավոտ խնդիրը կարող է լուծվել միայն այն դեպքում, երբ երկու կողմերը միասին քննեն իրենց անցյալը: Ես խստագույնս հորդորում եմ օրինագիծը չդնել այսօրվա օրակարգում»:[17]

ԱՄՆ-ի հաջորդ նախագահ Ջորջ Ու. Բուշը, հետևելով իր հոր օրինակին, դեռ իբրև նախագահի թեկնածու, խոստացավ ընտրվելու դեպքում

ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Այսպես, 2000թ. փետրվարի 20-ին իր նախընտրական քարոզարշավի ակտիվ մասնակիցներ Էդգար Հակոբյանին և Վազգեն Մեղրակյանին ուղղված նամակում նա գրում էր. «Քսաներորդ դարն ապականված է եղել աներևակայելի դաժան պատերազմներով, զանգվածային սպանություններով և ցեղասպանություններով: Պատմությունն արձանագրել է, որ անցած դարաշրջանի այդ բոլոր դաժանությունների առաջին կրողը եղել է հայ ժողովուրդը: Հայերը ենթարկվել են ցեղասպանական այնպիսի մի արշավի, որն անընդունելի է և պահանջում է բոլոր պարկեշտ մարդկանցից, որ հիշեն և ճանաչեն ընդհանրապես մարդկության դեմ գործված արյունալի ոճրագործությունների դարաշրջանում կատարված սարսափելի այդ ոճրի փաստերն ու դասերը: Նախագահ ընտրվելու դեպքում վստահեցնում եմ, որ որպես ազգ պատշաճորեն կճանաչենք հայ ժողովրդի ողբերգական տառապանքը»:[18] Ինչպես և իր հայրը, նախագահ ընտրվելուց հետո Բուշ Կրտսերը դրժեց իր այս խոստումը:

Նախագահ Ջորջ Ու. Բուշը շարունակեց յուրաքանչյուր տարի հայերի կոտորածների կապակցությամբ ուղերձ հղելու ավանդույթը: Իր այդ ուղերձներում Բուշ Կրտսերը նշում էր, որ անհրաժեշտ է դասեր քաղել հայերի տեղահանությունների և կոտորածների ողբերգությունից, և ավելի հանգամանալից կերպով անդրադառնում էր ամերիկահայ համայնքի ներդրած ավանդին ու ժամանակակից Հայաստանի խնդիրներին: Ավելին՝ Ջորջ Ու. Բուշն ավարտուն ձևակերպում տվեց Քլինթոնի արած ակնարկներին այն մասին, թե ամերիկյան վարչակազմն ինչպես է պատկերացնում անցյալի դասերը հիշելը և անցյալով չկաղապարված ապագա կառուցելը: Դա այլևս ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ճանապարհով հետագա ցեղասպանությունների կանխումը չէ, ինչպես տրամաբանական կլիներ ենթադրել: Դա պարզապես իր պատմության ընթացքում բազմաթիվ արհավիրքներ տեսած և ներկայումս էլ դժվարին կացության մեջ գտնվող Հայաստանին օգնելն է: Դա Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների վերականգնման ճանապարհով ցեղասպանության վերքերի ամոքումն է, երկու ժողովուրդների միջև թշնամանքի վերացումն ու նրանց հաշտեցումն է:

Այսպես, 2001թ. ապրիլի 24-ին իր ուղերձում Բուշ Կրտսերն ասում էր. «Այսօր նշվում է պատմության ամենամեծ ողբերգություններից մեկը՝ շուրջ 1,5 միլիոն հայերի բռնի տեղահանությունը և ոչնչացումը Օսմանյան կայսրության վերջին տարիներին: Այդ խայտառակ սպանությունը մթագնեց 20-րդ դարը և շարունակում է հետապնդել մեզ մինչ օրս... Ամենակարևոր ձևը, որով մենք կարող ենք հարգել անցյալի հայ զոհերի հիշատակը, հուսալի և ծաղկուն ապագա ստեղծելու գործում ժամանակակից Հայաստանին օգնելն է...»:[19]

Իր հաջորդ՝ 2002թ. ապրիլի 24-ի ուղերձում Բուշն ասում էր. «Այսօր մենք նշում ենք 20-րդ դարի սարսափելի ողբերգությունը՝ 1,5 միլիոն հայերի բռնի տեղահանությունն ու կոտորածը Օսմանյան կայսրության վերջին տարիներին: Այդ սարսափելի սպանությունները թողել են վերքեր, որոնք դեռևս չեն ամոքվում ժողովրդի հիշողության մեջ Հայաստանում, Թուրքիայում և ողջ աշխարհում... Այսօր աշխարհը հնարավորություն ունի խորհել և դասեր քաղել այդ սարսափելի իրադարձություններից: Այս օրը պետք է ընդունել, որ մյուսների դեմոնացումը հիմք է ստեղծում անվերջ և սև ատելության համար: Այդ չար մոդելի հաղթահարումը անցյալի առումով ցավոտ

ինքնավերլուծություն և ճշմարտության ու հաշտեցման հիման վրա նոր ապագա կառուցելու իմաստուն վճռականություն է պահանջում: Այս ոգով ես ակնկալում եմ Թուրքիայի կողմից Հայաստանի հետ տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի վերականգնումը...»:[20]

2003թ. ապրիլի 24-ին Բուշն ավելի հեռուն է գնում՝ ասելով. «Այսօր լրանում է մի սարսափելի ողբերգության՝ Օսմանյան կայսրության վերջին օրերին անհամար հայերի զանգվածային սպանությունների և բռնի տեղահանությունների տարելիցը: Շատ հայեր այս ահավոր իրադարձություններին «Մեծ եղեռն» են անվանում՝ արտահայտելով իրենց մեծ ցավը, որը շարունակում է հանգիստ չտալ նրանց և հարևան թուրքերին: Տառապանքը, որը կրեց հայ ժողովուրդը 1915թ., ողբերգություն է ողջ մարդկության համար, և աշխարհը չպետք է մոռանա այն: Ես միանում եմ ամերիկահայ համայնքին և ողջ աշխարհի հայերին՝ սգալու այդ սարսափազդու մահերը: Ես նաև ողջունում եմ Հայաստանի և Թուրքիայի իմաստուն ու հաստատակամ ընկերներին, որոնց միավորում է հաշտության ոգին՝ քննելու այս իրադարձությունները և դրանց նշանակությունը: Ես ողջունում եմ նրանց՝ այդ դառնություններից վեր կանգնելու և լավ ապագա կերտելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար...»:[21]

Ակնհայտ է, որ ավելի ու ավելի մահրամասնորեն անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրին նախագահ Բուշը, թերևս այդ գործընթացին չվնասելու մտադրությամբ, շարունակում է «ցեղասպանություն» բառի փոխարեն կիրառել «բռնի տեղահանություն», «ոչնչացում», «զանգվածային սպանություններ» ձևակերպումները:

Ինչևէ, ԱՄՆ-ի նախագահների ուղերձների կարևորությունն ընդունելով հանդերձ, պետք է նկատել, որ այդ ուղերձներում 1915-1923թթ. հայերի զանգվածային տեղահանությունն ու կոտորածներն իբրև «ցեղասպանություն» բնորոշելու խնդրի կարևորությունը երբեմն չափազանց շատ է մեծացվում: Հարկ է ընդգծել, որ ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործում ԱՄՆ-ի նախագահների դերը կայանում է ոչ այնքան ամենամյա ուղերձերում «ցեղասպանություն» բառն օգտագործելու, որքան ամերիկյան Կոնգրեսում ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունմանը չխոչընդոտելու և ընդունման դեպքում այդ բանաձևը ստորագրելու մեջ: Ըստ էության, միայն իրադարձությունների նման զարգացման դեպքում հնարավոր կլինի արձանագրել, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման և դատապարտման գործընթացը հասել է իր ամբողջական և տրամաբանական ավարտին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] The Armenian Mirror-Spectator. October 30, 1976. Տես նաև՝ "Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества". Документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и коментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, том 2, часть 1, Москва, Гардарики, 2003, док. 1348 (այսուհետև՝ "Геноцид армян. Ответственность...").

[2] The White House. Office of the Press Secretary. May 16, 1978. Տես նաև՝ Public Papers of the Presidents of the United States, Administration of Jimmy Carter, 1978, Book 1, Washington, Government Printing Office, 1979, p. 916.

[3] The White House. Office of the Press Secretary. April 22, 1981. Տես նաև՝ Public Papers of the Presidents of the United States, Administration of Ronald Reagan, 1981, Washington, Government Printing Office, 1982, p. 459.

[4] Congressional Record, February 20-27, 1990, p. S-1329.

[5] Բարսեղյան Լ. Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2001, էջ 8-9:

[6] Congressional Record, February 20-27, 1990, p. S-1220. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 16, փաստաթուղթ 1:

[7] The White House. Office of the Press Secretary. April 20, 1990. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետև՝ ՀՑԹԻ) գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 18, փաստաթուղթ 3:

[8] Բարսեղյան Լ., նշվ. աշխ. էջ 10-12:

[9] The White House. Office of the Press Secretary. April 24, 1994. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թղթապանակ 15, փաստաթուղթ 1, էջ 41:

[10] The White House. Office of the Press Secretary. April 23, 1995. Տես նաև՝ Public Papers of the Presidents of the United States, Administration of William J. Clinton, 1995, Washington, Government Printing Office, 1996, p. 694-695.

[11] The White House. Office of the Press Secretary. April 24, 1996. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թղթապանակ 15, փաստաթուղթ 1, էջ 43:

[12] The White House. Office of the Press Secretary. April 22, 1997. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թղթապանակ 15, փաստաթուղթ 1, էջ 44:

[13] The White House. Office of the Press Secretary. April 24, 1998. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թղթապանակ 15, փաստաթուղթ 1, էջ 46:

[14] The White House. Office of the Press Secretary. April 19, 1999. Տես նաև՝ "Геноцид армян. Ответственность...", док. 1439.

[15] The White House. Office of the Press Secretary. April 24, 2000. Տես նաև՝ "Геноцид армян. Ответственность...", док. 1453.

[16] Բարսեղյան Լ., նշվ. աշխ., էջ 13-14:

[17] Նույն տեղում, էջ 63-64:

[18] Նույն տեղում, էջ 21:

[19] The White House. Office of the Press Secretary. April 24, 2001. Տես նաև՝ "Геноцид армян. Ответственность...", док. 1473.

[20] The White House. Office of the Press Secretary. April 24, 2002. Տես նաև՝ "Геноцид армян. Ответственность...", док. 1492.

[21] The White House. Office of the Press Secretary. April 24, 2003. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 10, թղթապանակ 19, փաստաթուղթ 1:

Резюме

Прокламации президентов Соединенных Штатов Америки по поводу годовщин Геноцида армян (1976-2003).

Арарат Мирзоян

Прокламации президентов Соединенных Штатов Америки играют важную роль в процессе официального признания и осуждения Геноцида армян в США. Первый президент, заговоривший о Геноциде армян начиная с 1965г., когда этот процесс начался, был Джимми Картер. Начиная с него, президенты США, будучи еще кандидатами на пост президента, овещали в случае изврания признать геноцид, но после инаугураций завывали о своих овещаниях. Начиная с Картера, президенты США, говоря в своих прокламациях о Геноциде армян, описывали преступление геноцида, но извегали использования термина "геноцид". Единственным исключением стал Рональд Рейган. В место этого Джордж Х. Буш назвал резню армян "преступлением против человечества". Билл Клинтон и Джордж У. Буш назвали совытия 1915-1923гг. "депортациями и резней" и "депортацией, уничтожением и массовым убийством 1,5 миллиона армян". Важно, что вы в прокламациях президентов США резня армян выла названа "геноцидом". Тем не менее, роль президентов США состоит не столько в использовании термина "геноцид" в своих прокламациях, сколько в непрепятствовании принятию в Конгрессе США резолюции, признающую Геноцид армян.

Summary

Proclamations of the Presidents of the United States of America on the Occasion of Anniversaries of the Armenian Genocide (1976-2003).

Ararat Mirzoyan

Proclamations of the presidents of the United States of America play very important role in the process of the official acknowledgment and condemnation of the Armenian Genocide in the USA. The first president of the USA who spoke of the Armenian genocide since 1965, when the process started, was Jimmy Carter. Beginning from him, the presidents of the USA, being candidate for president, promised to acknowledge the genocide in case of being elected and forgot about their promises after the inaugurations. Beginning from Carter, the presidents of the USA described the crime of genocide when speaking about the Armenian genocide in their official proclamations but avoided using the term "genocide". The only exclusion was president Ronald Reagan. Instead, George H. Bush called the massacres of Armenians "crime against humanity". Bill Clinton and George W. Bush called the events of 1915-1923 "deportations and massacres" and "deportation, annihilation and mass killing of 1,5 million Armenians". It is important to see the Armenian massacres called "genocide" in the U.S. presidential proclamations. However, the role of the Presidents of the USA consist not so much in using the term "genocide" in their proclamations, but mostly in not blocking the adoption of resolution acknowledging the Armenian genocide in the U.S. Congress.